ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ-80, թիվ-81, թիվ-82, թիվ-84, թիվ-85, թիվ-86, թիվ-87 որոշումների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ-81 որոշման բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածի 2-րդ տողի 12-րդ սյունակում գրառված <<793211>> թիվը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի <<Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին>> թիվ 237 որոշման պահանջներին /Կոտայք-Թալին գնահատման շրջան, արոտ 2-րդ գնահատման խումբ/ :

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ-80, թիվ-82, թիվ-84, թիվ-85, թիվ-86, թիվ-87 որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Զ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2022թ.

Կատարող՝ Ա. Մինասյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 31-ի N804 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 22-ի N77-Ա- N87-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N83- Ա որոշման նախաբանում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված։
2. N84- Ա որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին չի համապատասխանում որոշման բովանդակությանը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
28 սեպտեմբերի 2022թ.